



ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՂՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

12 ՄԱՅԻՍ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդի Անգլիական Իրականության Հիմնադիրները
Ռօսլըրդ Պրաունինկ

ՏՕՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Գրիգոր Պասուելի Փէշիմալեան
[Ուսումնասիրութիւն]

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

Փրկող Գալսնիք

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Պասապան Մաաիի Հարցումը {

ՄԻԶՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ
ՀԱՅԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Լեզուարանական Վէճը

ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

Անտէ Թէօրիէ

«Գարմէն»ը

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱԵԱՆ

1907



சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

சென்னை

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական և ֆաղափական.—

Բաժանորդագրութիւն կ'. Պոլսոյ համար 8¹⁾ շրջ., դաւաճներու համար 108 շրջ. և օտար երկիրներու համար 35²⁾ ֆր.: Ձեռքէ վաճառում՝ ջասը փարա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի՛ հրապուրիչ դաճնալով՝ նորանոր բարեփոխներու շնորհիւ, շորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐՍԱՅԱՐԴ ԸՎԱԼՈՒ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ սլարբերաբար Օսմոթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղսնաւորական, երկրագործական, իրաւաբանական ևայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նխթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար առեն տառապելէ ետքը ակռայի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակռան, կամ գոռօնի մէջ առնել կուտայ, ա'լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լաւ, ճարտար ու արուեստին գաղտնիքներուն գիտակ ատամնաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և դո՛ւ մնալու մեծ ապահովութեամբ ոչեք է զիմել հանրածանօթ ատամնաբոյժ Խաչիկ Էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէ-Գաբու:

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՁԵՐՈՒ ԹՇՆՍՄԻՆ՝ գրած է Տօքթ. Յուլս. Տ. Ստեփանեան մասնաւորապէս ծնողքներու և դաստիարակներու համար, որոնք կը փափաքին գիտնալ թէ ի՞նչպէս կարելի է օգտակարապէս խօսիլ մանչերու, իրենց տարիքին յատուկ եզոզ մոլութեան վրայ և անկէ զգուշացնել զանոնք: Կատարեալ գեղագիր մըն է այս գրքոյկը՝ գիշութեան դէմ: Գինը 5 դրուշ:

ՄԱՆՁԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ՝ կը խօսի մանչերու յատուկ մոլութեան վրայ բո՛ւն իսկ մանչերուն, որպէս զի անոր ընտթիւնը և վստահաւորութիւնը հասկնան նոյն իսկ իրենք ու կամովին հրաժարին անկէ: Անգլիացի ընթերցողներէ ա՛յնքան համակրութիւն վայելող այս գրքոյկը հայերէնի թարգմանած է Տօքթ. Յուլս. Տ. Ստեփանեան հայ սրտանիւներու ծառայութիւն մը մատուցանելու համար: Բացարձակապէս մատահելի ու անօրինակ կերպով աժան — լոկ 40 փարա — որպէս զի մատչելի ըլլայ ամէն մանչու: Կեդրոնատեղին՝ Պալենց Գրատուն, կ'. Պոլիս:

Աղգ. Հիւանդանոցի նոր շինուած յարկերուն պաշտօնականներուն և սպասարկութեան համար արդի. պիւտժէին վրայ տարին 2000 ոսկի աւելցնելու պէտքը կը զգացուի: Այս նկատումով կարեւոր կը դատուի պաշտօնի կոչել ասկէ առաջ կազմուած հասոյթի և ծախքերուն յանձնաժողովը, որուն պաշտօնը պիտի ըլլայ հասոյթի աղբիւրները աւելի արդիւնաւորելու աշխատիլ և ծախքերու մէջ կարելի խնայողութիւնս ները դործադրել: Այս կերպով, ամէն տարի մէկ երկու հազար ոսկիի նոր հասոյթ մը ձեռք բերելու միջոցը կարելի պիտի ըլլայ գտնել. — Օթթօ Հանէման և Տօթթ. Տիթրիս գերման գիտնականները Նիկոմիդիա երթալով այցելելու են Առաջնորդ Արազանին, որ սիրալիր ընդունելութիւն մը կատարիր, ձեռագիր Աւետարան մը, մագաղաթէ գիրքեր և ուրիշ հնագիտական առարկաներ ցոյց տուեր է: Եկեղեցի այցելելու են, ուր աչքէ անցնելով շուրջանները, հիացում յայտնելու են: Տ. Ոսկի քհնյ. Պիպիեանի ընկերակցութեամբ այցելելու են Յոններու Բանդալէնի վանքը, Տիկին Ս. Պօլիկեանի գորգաշինութեան գործատունը, յետոյ Ատաբազար մեկներ և զանազան վայրերը այցելելէ ետքը, Ս. Հրէշտակապետ եկեղեցին դացելու են, ուր ընդունուելու են պատուով և իրենց ցոյց արուելու են եկեղեցիին հնութիւնները: Տ. Միքայէլ Ա. քհնյ. անոնց այցելութեան յիշատակին՝ նուիրել է զոյգ մը եկեղ. զգեստեղէնի վերաբերեալ հին կտորներ: Հիւրերը պատուասիրուելու են Աղգ. Վարժարանի ընդունելութեան սենեակին մէջ, և սրտագին շնորհակալութիւն յայտնելով մեկներ են: Ծր. առաւ դացելու են Արմաշ, ուր Տ. Թորգոմ Ծ. Վրդ. ի բացակայութեան՝ ընդունուելու են Տ. Մեսրոպ, Շաւարշ Վրդ. ներուն կողմէ. անոնց ցոյց արուելու են վանքին հնութիւնները. գերման գիտնականներուն ուղարկութիւնը զրտուել է Յարութիւն փաշա Տատեանի ալլիկան մէկ նուէրը, մետաքսէ ասեղնագործուած քառակուսի գոգնոց մը, բնականին նման ծաղիկներ բանուած վրան: Հիւրերը լուսանկարելու են այս ծածկոցը: Ծաշեր են վանքին մէջ և եկեղեցին և ուսումնարանը այցելելէ վերջը մեկներ են, խնդրելով Տ. Մեսրոպ Վրդ. է որ իրենց շնորհակալութիւններն ու յարգանքները հաղորդէ Ս. Պատրիարք Հօր, Տ. Թորգոմ Ծ. Վ. ի և Նիկոմիդիոյ Առաջնորդ Արազանին՝ որ օր առաջ ծանուցած էր հիւրերուն այցելութիւնը: Կիրակի օր Դերման գիտնականները Էսկի-Շէհիր ուղեւորելու են, հեռագիրով շնորհակալութիւն յայտնելէ՝ վերջը Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփաննոս Արքայ. ի: — Ա. Զ. Գ. Հի. Ի. Ա. Ն. Գ. Ա. Ն. Ո. Յ. Ն. Ն. Ո. Ռ. Բ. Ա. Ն. Ո. Յ. — Գարակէօղեան կտակի գումարով կառուցանելի Որբանոցին շինութիւնը արտօնող Կայսերական Հրովարտակը յանձնուած է Աղգ. Պատրիարքարան: Որբանոցը պիտի կառուցուի Հիւանդանոցի դէմի պարտէզին մէջ, 3600 քառակուսի մէթր տարածութեամբ գետնի մը վրայ: Շէնքին լայնութիւնը պիտի ըլլայ 20 մէթր, բարձրութիւնը 18 մէթր և երկարութիւնը 180 մէթր: — Ս. Պատրիարքը 28 յօդուածներէ բաղկացած կանոնադիր մը պատմատաճ էր Եգիպտոսի Առաջնորդարանին ու Գաւառային Վարչութեան



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 25

12 ՄԱՅԻՍ 1907

ԱՐԴԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

ՌՈՊԸՐԴ ՊՐԱՌԻՆԻՆԿ

Տառնեւիններորդ դարուն վերջի կէսին՝ անգլիական Գրականութեան ամենանշանաւոր երկու դէմքերն են Թէնիսըն և Պրատենինկ։ Երկուքն ալ վայելած են տարիքի լեցունութիւնը, ղգալի հակապատկերը կազմելով մեր այս շարքին մէջ երեւցող չորս նշանաւոր գրագէտներուն կամ բանաստեղծներուն, որոնք արդի անգլերէնը շինողներուն մէջ ա՛յնքան պատկառելի դեր մը ու դիրք մը գրաւած են։ Թէնիսըն և Պրատենինկ, երկո՛ւքն ալ մաս ու բաժին ունեցած են իրենց ժամանակի իմացական և ընկերային շարժումներուն մէջ. երկո՛ւքն ալ եղած են խուզարկու ուսանողներ կեանքի, ինչպէս պէտք են ըլլալ բոլոր ճշմարիտ բանաստեղծները, և վերջապէս երկո՛ւքն ալ պատկերացուցած են մարդկային բազմաթիւ ու բազմատեսակ նկարագիրներ, ներկայացնելով ամէն տեսակ բնութիւններ, ի՛սկապէս վարպետի գրիչով, Բայց ա՛յսօքան կէտերու մէջ իրարու նմանող այս երկու ժամանակակից հսկաները՝ մէկ էական՝ անգամանքով մը տրամագծօրէն կը տարբերէին իրարմէ։ Թէնիսըն՝ հոյակապ արուեստագէտը կը հանդիսանայ, մինչ Պրատենինկ կը պանծայ իր հզօրագոյն իմացականութեամբը։ Մէկուն մէջ արուեստը կը փայլի, իսկ միւսին մէջ՝ միտքը։ Գեղարուեստի պակասութիւնն է

անտարակոյս պատճառը որ Պրատունինկ ժողովրդականութիւն չէ՝ կրցած վայելել։ Չէր դիտեր իր պատգամը ժողովուրդին ականջին հասցնելու կերպը, և թերեւ երբեք ալ փորձ մը չըրաւ։ Թէնիսընի տողերուն շնորհը և ներդաշնակութիւնը հրճուանք պատճառած են, և խորհուրդի համեմատաբար նիհարութիւնը և դատումի ծանծաղութիւնը մոռցուած են իր բառային սուլաւորութիւններուն հիանալի ներդաշնակութեանը մէջ։ Պրատունինկի բանաստեղծութեան մէջ երբեք չի տեսնուիր այդ դեղարուեստական ըմբռնումը։ Ասոր համար է որ Պրատունինկ կրցած չէ հմայել հանրային ականջը, որ՝ հա՞րկ է ըսել՝ ամէն տեղ ու ամէն դարու մէջ՝ այնքան կարեւորութիւն չի տար խորհուրդին, որչափ անոր արտայայտութեան եղանակին։ Ասով մէկտեղ, պէտք է ըսել թէ դարուն առաջին միտքերուն, խորհուրդի աշխարհը կառավարող և կարապետող մարդոց համար Պրատունինկ եղած է և է զօրաւոր ու ներշնչող ուժ մը։ Իր ցանած գաղափարներովը՝ իր խորունկ աղդեցութիւնը ձգած է իր ժամանակին գրականութեանը վրայ։ Թէ և՛ կը կրկնենք թէ՛ երբեք չէ՛ եղած ժողովրդական բանաստեղծ մը, ինչ որ սովորաբար կը հասկցուի այդ բացատրութեամբ։ Բայց աղդեցութեան չափանիշը ժողովրդականութիւնը չէ՛ անպատճառ, և ասոր եթէ սպացոյց մը պէտք ըլլար՝ կրնայինք յիշել Լճնիֆէլլօն և Տանդէն։

Ռոպրդ Պրատունինկ առատ ու արագ արտադրող մը եղած է՝ երեսունի մօտ հատորներ արտադրած է։ Ժամանակակից ո՛չ մէկ գրող ցուցուցած է աւելի բեղունութիւն, ոճի ղիւրադարձութիւն կամ ճարտարութեան ընդունակութիւն։ Քիչ գրողներ՝ իրեն նման զօրաւոր հաւատք մը ունեցած են իրենց վրայ, ապաւինելով ապագային ասպնով վճիռին։ Կարգացած հմ նոյն իսկ գրութիւններ, որոնց հեղինակները կը վարանին ճանչնալ ու համարել զինքը իր բանաստեղծ։ Կծու քննադատութիւններու ենթարկուած են իր մա՛նաւանդ առաջին հրատարակութիւնները։ Ընդհանուրէն չէ՛ հասկցուած Պրատունինկ, և ասոր ալ պատասխանատուն ինքն է, քանի որ դժուարա հասկնալի և նոյնիսկ անհասկնալի տողեր շատ կը գտնուին իր քերթուածներուն մէջ։ Ասով մէկտեղ սակաւ, ամէն քննադատ կ'ընդունի հիմա թէ բառին ճշմարիտ իմաստովը բանաստեղծ մը ու մեծ բանաստեղծ մըն էր Պրատունինկ։

Պրատունինկի գրուածքներուն մէջ տեսնուած թերութիւններուն երկու գլխաւոր պատճառ տրուած է։ Առաջին, բանաստեղծութեան մասին իր ըմբռնումը լուրջ էր։ Բոլոր իրապէս մեծ արուեստագէտներուն պէս՝ ինք կը դաւանի արուեստին վեհութիւնը և պատասխանատուութիւնը։ Իրեն համար՝ բանաստեղծութիւնը ներդաշնակ ճշմաներու արտադրութիւնը կամ սիրուած յաւակնութիւններու պանծացումը չէ՛, կեանքի չափ լո՛ւրջ է ան, և անոր մօտենալու է ակնածու և արդարաւորով

նպատակով: Իրեն համար մանաւանդ՝ բանաստեղծութիւնը բոլոր իմացական աշխատութիւններու ազնուագոյնն է և ուստի պէտք է որ ծառայէ իմացականութեան, ի՛նչպէս յուղումի: Այս ըմբռնումով է որ Պրաունսինկ իր բանաստեղծութեան մէջ դրած է իր ամէնէն նրբամիտ և խորունկ խորհուրդները և առ հասարակ՝ աւելի արժէք կը դնէ խորհուրդին քան զայն արտայայտելու մեթոտին կամ կերպին մէջ: Զինքը իրաւամբ կոչած է հեղինակ մը՝ բանաստեղծութեան Քարլսայլը. պատգամը ամէն բան է. բառական զգեստաւորումը՝ ոչ ի՛նչ: Հոս է որ ամէնէն աւելի կը շեշտուի Պրաունսինկի տարբերութիւնը բոլոր ուրիշ արդի բանաստեղծներէն: Բոլորովին անտարբեր չէ՝ բառերու ներդաշնակութեան և արուեստին, բայց սովորաբար զանոնք կը նկատէ երկրորդական կարեւորութեամբ: Այս պատճառով, իր արտայայտած գեղեցիկ ու հիանալի խորհուրդներէն չատերը թաղուած են՝ յուսահատօրէն՝ անբաւական և սխալ նախադասութիւններու մէջ, և ուստի անոնք մեռած տառ կը մնան ընթերցողներու մեծամասնութեանը համար, որոնք բանաստեղծութեան չեն մօտենար. դիտական հետազօտութեան համբերող ոգիովը: Երկրորդ պատճառը Պրաունսինկի բանաստեղծութեան մթնթեան՝ նկատուած է իր ոճին խտութիւնը: Իր մէկ հատորին ընթերցումէն վերջ, քննադատ մը կը յայտարարէր իրեն թէ իր սողերը անհասկնալի էին ու երկարապատում և խրատի ձեւով մէջ կը բերէր օրինակը Ուրտղուըրթհի, որ յարմար բառ մը գտնելու համար երկու շաբաթ կը մտմտար շատ անգամ: Եւ անգարեւ այս խրատը սա՛ ազդեցութիւնը ունեցաւ Պրաունսինկի վրայ, որ ատկէ ետքը իրեն կանոն ըրաւ երբեք չի գործածել երկու բառ՝ երբ մէկը բաւական էր նոյն բանը ըսելու համար: Այս որոշումին արդիւնքը սա եղած է որ՝ յաճախ չի՛ գործածեր բաւականաչափ բառեր իր միտքը բացատրելու համար. կը գործածէ մէ՛կ բառ մը, և կը սպասէ որ իր ընթերցողը լրացնէ երկուքը: Ու ճիշդ այս պարագան է որ իր «Սորտէլլօ»ն հանելուկի ձեւով գրուածք մը կը դարձնէ:

Ասոնք են երկու գլխաւոր պատճառները թէ ինչո՞ւ ա՛յնքան մութ և դժուարահասկնալի են իր քերթումները: Եւ տարակոյտ չիկայ թէ այս յանցանքը աններելի պիտի ըլլար, եթէ ինք մեծ բանաստեղծ մը ճանչցուած չըլլար. իրեն համար ալ պիտի գործածուէր Շուէտացի բանաստեղծին սա՛ վճիռը. «մթին կերպով արտայայտուածը՝ մթին կերպով խորհուած է»: Բայց Պրաունսինկ ա՛յնքան խորապէս ազդած է իր ժամանակի — այսինքն՝ ներկայ — խորհուրդին վրայ որ՝ իր այդ կրկնակի թերութիւնները բոլորովին ներած են իր ամենախիստ քննադատներն իսկ, և հռչակած են զինքը՝ բանաստեղծներու մեծագոյններէն: Բանաստեղծներուն կարծիքը ա՛յն եղած է ընդհանրապէս թէ առանձնութեան կեանքը միայն կը յարմարի բանաստեղծութեան, և թէ քաղաքակրթութեան մեծ կեդրոններու գործի կեանքը անյարմար և նոյն իսկ

արգելք է երեւակայութեան գործունէութեան: Մէկը կը զիմէ գիցաբանութեան, ուրիշ մը՝ վիպականութեան, և երրորդ մը՝ բնութեան: Բայց ամէնքն ալ հաւասարապէս կը փախչին քաղաքներու կեանքէն: Այս կանոնին հիանալի բացառութիւն մը կը հանդիսանայ Պրաունինկ: Ինք Լոնտոնցի է և Լոնտոնի մէջ ապրած է իր ամբողջ կեանքը: Եւրոպական երկիրները այցելած է, բայց այդ կողմերու իր ճամբորդութիւններուն միջոցին աւելի ծանօթ կը նմանի քաղաքներու գրավաճառներուն, քան բարձրաբերձ Ալպեանին ձիւնապսակ կատարներուն: Ամբողջն չի խորշիր. կը փնտռէ ու կը սիրէ ժողովուրդը: Թիւերու զգացումը կը հրահրէ իր երեւակայութիւնը: Մարդկային կեանքի մեծ տռամը կը գրաւէ, կը հրապուրէ զինքը: Իտալական տեսարանները իրաւցնէ կը հրապուրեն զինքը, և զանոնք լուսանկարչական ձեռնութեամբ յաջողած է պատկերացնել, սակայն իտալական կեանքն է որ զիւրիշ զինքը: Իրեն նիւթ հայթայթող բանը կեանքն է, մարդկային կեանքը, աժութին կեանքը, յուզումներու և կիրքերու գերազոյն արտայայտութիւնը եղող կեանքը: Ու այս տեսակէտէն՝ Պրաունինկ կը գրաւէ բացարձակապէս եղական դիրք մը արդի բանաստեղծներուն մէջ: Պրաունինկ՝ այս կեանքը կը նկատէ նախապատրաստութիւն մը և կըթուլի մը բարձրագոյն կեանքին համար: Տեղ մը կ'ըսէ. «Վերը երկինքը կայ և գիշերէ գիշեր փառաւոր տանիքին մէջէն կը նայիմ, վառն զի կը յուսամ Աստուծոյ երթալ»: Յուստեսութիւն չիկայ իր տողերուն մէջ. ներկային չարիքներէն անդին և վեր կը սպասէ պայծառ և երկնապարզ եւ օրումն: Կը հաւատայ թէ մարդիկ ամէնքն ալ ունին ներշնչուած վայրկեաններ, որոնք իրենց գործել կուտան բարի բաներ, ազնիւ գործեր, և թէ մարդուն ամբողջ յաւիտեականութիւնը կախում ունի այս տեսակ վայրկեաններու պատշաճ գործածութենէն: Այս տեսակ երկնային վայրկեաններու մէջ, կ'ըսէ, կը տեսնենք նեղ ճամբան՝ որ կ'առաջնորդէ դէպի յաւիտեական կեանքը:

Կեանքի մասին իր ունեցած այս ըմբռնումին ակնարկելէ վերջը՝ տեղն է գիտնալ թէ ի՞նչ էր իր դիրքը հանդէպ կրօնական իրերուն: Ըսուած է թէ բանաստեղծութիւնը հաւատք է, և մեծ բանաստեղծը՝ մեծ հաւատաւոր մըն է: Ճշմարիտ բանաստեղծի մը կաղմութեան համար պէտք մըն է ունենալ անտեսանելի թափանցելու կարողութիւն: Այս ըմբռնումով՝ անհաւատութեան բանաստեղծութիւնը անբնական ապրանք մըն է. քիչ կենսականութիւն և անձուկ ասպարէզ ունի ան. երբեք չի հասնիր իրապէս բարձր և յիշատակելի արդիւնքներու: Միւս կողմէ, իրապէս մեծ բանաստեղծին կոչումն է հանդիսանալ տեսանող և մեկնիչ: Ան կը տեսնէ աւելի հեռուն, աւելի խորունկ և աւելի բարձր քան սովորական մարդերը և կը մեկնէ սովորական մարդուն համար մթօրէն զգացուած և տարտամօրէն ըմբռնուած բաները: Եւ վերջի ժամանակներու մէջ՝ թերեւս չիկայ մէկը որ Պրաունինկի չափ արթնացուած և

զօրացուցած ըլլայ մարդոց կրօնական տեսողութիւնը, կրօնական ներհայեցութիւնը: Կրօնական կալուածին մէջ Պրատունինկի հանճարին գործելակերպը հասկնալու համար կը բաւէ կարգաւ իր է՛ն զարմանալի և վսեմ քերթուածը՝ «Ջատին Օր»ը, որուն մէջ տրամախօսութեան ձեւին տակ երեւան կը բերուն կրօնքի շուրջը դարձող հիանալի վկայութիւններ և համոզումներ. քերթուածին նիւթը կրնայ համարուիլ իր առաջին տողերէն մէկուն մէջ դրուած սա՛ խօսքը: «Որքան դժուար է Քրիստոնեայ մը ըլլալ»: Ու Պրատունինկի կրօնական գաղափարներուն ամբողջ աշխարհը կ'ամփոփուի սա՛ տիրական զգացումին մէջ թէ Աստուած Սէր է: Պրատունինկ ո՛չ միայն կրօնատէր բարեպաշտ մեծ բանաստեղծ մըն է, այլ նաև որոշապէս աստուածաբան բանաստեղծ մը: Քրիստոսի մասին իր ունեցած բարձր գաղափարը և Քրիստոնէութիւնը շահագրգռող վարդապետական կնճառոտ խնդիրներ՝ իրենց հեշտին լուծումը կը գտնեն «Բոլին»ի մէջ, որ ներշնչուած քերթուածի մը տպաւորութիւնը կը թողու վրայ:

Անգլիական բանաստեղծութեան մէջ Պրատունինկ կը գրաւէ բացարձակապէս միայնակ տեղ մը ու ինքնայատուկ դիրք մը: Քննադատ մը կ'ըսէ թէ անիկա իր նախատիպը չունէր և յաջորդն ալ չի կրնար ունենալ: Ասով պարզապէս ըսել կ'ուզուի թէ՛ ինք իրեն համար բացաւ նոր ճամբայ մը բանաստեղծական կալուածին մէջ, գրեթէ բնաւ չազդուելով նախորդ բանաստեղծներէ: Յայտնի է թէ ո՛ր և է բանաստեղծի գործերը կարգաւոր՝ կարելի է հետեցնել թէ անիկա իր ո՛ր նախորդէն թելադրուած է, զո՛վ օրինակած է մասնաւորապէս: Պրատունինկի մասին այդ ազդեցութիւնը գտնել կարելի եղած չէ: Եթէ հարկ ըլլար զինքը նմանցնել ուրիշի մը՝ այդ ուրիշը ապահովաբար Տանդէն միայն կրնար ըլլալ: Որովհետեւ Պրատունինկ ալ՝ Տանդէի նման՝ պատած է մարդկութեան վիշտերուն, ցաւերուն, յուսահատութիւններուն սոսկալի չըջանալիներուն բոլորովը, բայց երբեք չէ կորսնցուցած տեսիլը Աստուծոյ անմահ սիրոյն և գթութեան: Հոն ուր ուրիշներ պիտի վարանէին և թերահաւատէին՝ ինք կ'երգէ սրտին խորերէն անսահման հաւատքի երգ մը: Ինք կը սորվեցնէ մեզի թէ կատարուած բարի գործ մը մեռնի թերեւս, սակայն յետոյ կը վերակենդանանայ և կը շարունակէ անվերջա՝ նալի օրհնութիւն մը գործել աշխարհի մէջ:

Պրատունինկի գործերը կարգացող մը սա՛ երկու տպաւորութեան տակ կը մնայ. կը զգայ անոր միտքին մեծութիւնը և կը զգայ ուժը և լայնութիւնը անոր համակրութիւններուն: Պրատունինկի բանաստեղծութեան տիրական յատկութիւններն են ուրեմն՝ կորով, հաւատք և խորհուրդ: Այսքանը կ'ընդունին բոլոր իր քննադատները անխտիր: Եւ ականաւոր Փրանսացի քննադատը՝ Թէն՝ ո՛չ միայն ընդունած է թէ մեծ բանաստեղծներու մասին Անգլիա չատ կը գերադասեցէ Ֆրանսան, այլ նաև յայտարարած է թէ Պրատունինկ առաջինը կը հանդիսանայ իր ատենի անգլիացի բանաստեղծներուն մէջ: Եւ այս դատումին իմաստը լիովին հասկնալու համար պէտք է յիշել թէ՛ Պրատունինկի ժամանակակից մըն էր Թէնիսըն, որ նիւթը պիտի ըլլայ մեր յաջորդ գրութեան:

ՏՕԲԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇԻՄԱԼՃԵԱՆ^[*]

յատուկ չէ միայն փէշտիմալճեանի: Առհասարակ մեր մատենագիրներուն կեանքերը, շատ կէտերու մէջ անծանօթ կը մնան: Որչափ բան գիտենք մեր երանաշնորհ անգուգական զոյգերուն, Սահակի և Մեսրոպի վրայ. որչափ բան գիտենք Եղնիկի, Կորիւնի, Եղիշէի և մեր գրականութեան փառքը եղող միւս մատենագիրներուն կեանքերուն վրայ: Ոսկեդարու գրական ճոխ արտագրութեանց մէջ, մեր բազմերախտ թարգմանիչներէն իւրաքանչիւրին մասնակցութեան բաժինը ծանօթ է: Մեր ամբողջ գրականութեան մէջ հազիւ կը հանդիպինք մէկ, երկու կենսագրութիւններու, որոնք շատ հեռու են ներկայ դարուս ըմբռնումներէն՝ նկատմամբ կենսագրութեան: Առնենք օրինակի համար, Կորիւնի կենսագրականը Ս. Մեսրոպի վրայ. ի զո՛ւր պիտի վնասունք հոն շահեկան տեղեկութիւններ մանուկ Մեսրոպի վրայ, անոր մանկական արարքներուն վրայ, փոքրիկ անեֆօթներ՝ որոնք մարդը կը բարացուցնեն: Հոն կը տեսնենք աշակերտը (Կորիւն) որ կը հիանայ իր մեծ ուսուցիչին վրայ. կենսագրութիւն կոչուածը ուրիշ բան չէ, բայց եթէ դրուատական գնահատանք մը մեծ ուսուցանողին սխրալի գործին: Ի՞նչ է պատճառը որ, օրինակի համար, Ոսկեդարու մեր մատենագիրներուն ստուար մեծամասնութիւնը հրապարակած չէ իր անունը, յայտնելով որ յոգնաւաստակ ճիգերուն, գիշերաջան տքնութեանց արդիւնքն է այն ինչ երկարաշունչ երկը: Արդեօք մեր այս գրասէր, յառաջգիմասէր նախնիք իրենց գեղեցիկ նպատակը իրականացնելու հետապնդման և առաւելադանց սիրոյն մէջ [սեղեցի՞ն՝ անձնուրաց խոնարհամտութեամբ՝ եսին, բանաւոր սահմանի մէջ, փառասիրական անմեղ ձգտումները: Եթէ այս ենթադրութիւնը բաւական սեպուի բացատրելու մեր նախնի մատենագիրներու լռութիւնը իրենց անձերուն և աշխատութեանց վրայ, ի՞նչպէս բացատրենք մեր գրական վաստակաւորներուն վրայ հիացողներուն լռութիւնը: Գործ և գործիչ միշտ սերտ առնչութիւն ունեցած են իրարու հետ. հոգեբանական երեւոյթ մը չէ՞ որ իմացական գործ մը, օգտակար եւ փառաւոր, ուրիշին ուշադրութիւնը դարձնէ, ո՛չ, սեւեռիլ հարկադրէ գործիչին վրայ: Ինչո՞ւ համար ուրեմն երբ յաջորդ սերունդը հիացումով կը գնահատէ կատարուած գրական աշխատութիւնը, կը լռէ գործիչին վրայ, զանց կ'ընէ կենսագրական ծանօթութիւններ տալ, ծանօթացնելու համար մեզի գործիչը: Նպատակս չէ վերլուծել այս զարմանալի երեւոյթը մեր գրականութեան մէջ, այլ միայն մատնանիշ ընել զայն և անցնիլ մեր նիւթին:

Գրիգոր ֓էշտիմալճեան, ընիկ Կ. Պոլսեցի, ծնած է 1773ին, հաւանօրէն աղքատիկ ընտանիքէ[*]: Իր մանկութեանը՝ նախակրթութիւնը

[*] Հայաթիոյ Ազգ. Մատենադարանին թիւ 122 ձեռագիր Նամականին՝ ֓էշտիմալճեանէն գրուած և իր մէկ աշակերտէն հաւաքուած, ի վեր կը հանէ այս պարագան:

ստացած չէ ո՛ր և է նախակրթարանի մէջ, որովհետեւ այդ ժամանակին՝ ոչ Յոյները և ոչ ալ Հայերը նախակրթարաններ ունէին: Օսմանեան մեծազօր ինքնակալներէն Սուլթան Սէլիմ Գ.ի բարեհաճ արտօնութեամբ 1789ին դպրոցներ բացուեցան Կ. Պօլսոյ մէջ: Այս առիթով թեւեւս աւելորդ չէ յիշել թէ՝ մանչերու հանրային տաճին Հայ դպրոցը հաստատուած է 1790ին, Գում-Գարու, Լանկա, Ֆըշըճը փողոցին մէջ, ճիշդ այն տեղին վրայ, ուր հիմա կը բարձրանայ Աղջկանց Ս. Լուսաւորչեան վարժարանը: Երախտագիտութեամբ յիշենք նաեւ այս տաճին դպրոցին հիմնադիր-բարերարը, Միւրիճանեան Մկրտիչ Ամիրան, զոր յետոյ ժողովուրդին երախտագիտութիւնը պատուեց Շնորհի անուանակոչութեամբ:

Փէշտիմալճեանի մանկութեան ժամանակ՝ Հայ մանուկները կ'ուսանէին մանկատներու, վարպէտ-տներու, խաներու, խանութներու եւ կամ եկեղեցիներու խուցերուն մէջ: Պատանին Փէշտիմալճեան ալ ստացաւ իր ուսումը հաւանօրէն եկեղեցիի մը խուցին մէջ, աշակերտելով էջմիածնի միաբան Թէոդորոս սարկաւազին^[1]:

Առաջին անգամ պատմութեան մէջ Փէշտիմալճեանը յիշուած կը գտնենք իւր մանկավարժ Օրբազիւղի դպրոցին: Իր ուսուցչական պաշտօնը սկսաւ հոն, թերեւս 17 տարեկան հասակին մէջ (1790-1773): Կը թուի որ շատ դո՛ւ չեղաւ իրեն եղած վարձաւարութենէն, հետեւաբար շատ խոնարհութեամբ հրաժարագիր մը մատոյց հոգաբարձուներուն որ հրաման տրուի իրեն «երթալ ի վաճառանոց, առ ի հայթայթել զկարեւոր պէտս»^[2]: Սա իրողութենէն թէ՝ Փէշտիմալճեան իր պաշտօնը շարունակած է Միջագիւղի դպրոցին մէջ, անբանաւոր չէ հետեւցնել թէ՝ Հոգաբարձութիւնը յաջողած է տարհամոզել զայն իր դիտաւորութենէն, պահելով զայն իր ուսուցչութեան մէջ, որուն փառքը ըլլալ սահմանուած էր օր մը: Փէշտիմալճեան ամէնուն սիրելի եղաւ իր հեղահամբոյր բնաւորութեամբ և խղճամիտ պաշտօնավարութեամբ. մասնաւորապէս Տիւղեանց համակրութիւնը և պաշտպանութիւնը կը վայելէր: Ոմանք նախանձեցան անոր, տեսնելով որ պաշտպանութիւն կը վայելէր ա՛յնքան բարձր ու ազդեցիկ չըմանակի մը մէջ: 1819 թուականէն վերջը, երբ Տիւղեանները ա՛լ ազդեցիկ չէին, Փէշտիմալճեանի համբաւին ու փառքին նախանձողներ կ'որոշէին այս պատուական ուսուցիչին ամսականէն 50 դահեկան զեղչել^[3]: Փէշտիմալճեան կը համակերպի այս որոշումին, շարունակելով իր պաշտօնը Միջագիւղի մէջ:

[Յաջորդով]

ՄԻՆԱՍ ԾԱԼԵԱՆ

[1] Տես իր նամականին, էջ 40—51:

[2] Տես իր նամականին:

[3] Տես իր նամակը, ուղղուած էջմիածին (ղարձեալ՝ նամականին մէջ):

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՎԷՃԸ

Գուցէ աւելորդ չըլլայ մէջ բերել հետեւեալներն ալ: Վառաճագի իր հրաւերին մէջ յատկապէս կը շեշտէր որ. «Եթէ այս բառը այն կողմերը դեռ դորձածութեան մէջ է, քանի մը նախադասութեանց հաւաքածոյ մը ընելով դրկէ մեզ (Չիթճեանը), որոնցմէ կարենանք նախազնաց և յետագնաց բառերու շարքին շնորհիւր հետեւեցնել թէ հոս ալ սարկէ՞ն է բառը, և կը պէտք չէ՞նք քի վրիպել...»: Նախ կը դնեմ ինծի ծանօթ բոլոր բառերը սարկէն ածանցեալ, քաղելով բառարանէս. թերեւս ինծի անկարեւոր թուած բառ մը այդ շարքէն՝ լոյս մը տայ եղած վնասաւորութիւն: Յետոյ դառնամ քի և քի լծորդութեան խնդիրին: Սա՛րա՛դրել (յարդարել). սա՛րակ (բանուր, մշակ). սարակա՛փաղ (կիներու զարթոթեցան). սարազունջ՝ (կիներու թիկնաղարդ). սա՛րա՛ն (առաջաստակալ ձող՝ նաւի). սա՛րա՛նել (նաւի կայմին՝ առաքաստակալ հաստատել). սարեկ (ձձուձի բերանակալ կաշի). սա՛րզա՛ (ընկոյզներ՝ սառոյցի վրայ շարել ևւ ճանով դարնել-թուցնելու խաղ մը. չա՛ր-է-զարկ). սարձիլ՝ (գութանի երկրորդ կարգի լծկանը). սարեած՝ (փայտեղէն կազմած գութանի). և ուրիշ ածանցումներ ու բարդութիւններ՝ ասոնց վրայ: Ահա ա՛յս չափ: Կայ նաև սա՛ր շեշտաւոր յառաջադիր մասնիկ մը, որ բառի մը սկիզբը զրուելով կրկնաւորի իմաստ կուտայ, ինչպէս. սա՛ր-սաղ-

րունք. սա՛ր-սաւան, սա՛ր-սքիա՝ [սարի պէս հակայ] ևն.:

Հիմա դանք քի և քի լծորդութեան հարցին: Նախնական կ'ըսէ թէ. «Վանեցիներու լեզուին մէջ քի գիրին հնչումը երբեք քի գիրի պէս չարտասանուիր, այլ որոշ և յստակ կերպով քի հնչուի: Եւ այս կանոնը բնաւ բացառութիւն չունի: Հետեւաբար կ'ստատարեմք թաթուր Վանանդացին թէ քի և քի մէջ որ և է չիթութիւն չեն ընել Վանի տեղական գաւառաբարբառ խօսողները: Այլ գիրն է որ կը չիթութիւն քի հետ... ևն.»: Ընդհանուր առումով այսպէս է. գի և քի լծորդութիւնը կամ չիթութիւնը սովորական է մեր գաւառաբարբառին մէջ. ինչպէս. կնգնել - գտնել. կտէլ - գդալ. կիող - գող. կիոռս - գորս. կնաց - գնաց. կիոռծ - գործ ևն.: Սակայն «բնաւ բացառութիւն չունի» վճիռը պէտք է վերցնենք քի և քի լծորդութեան խնդիրին մէջէն: Եթէ կանոնի մը դէմ բացառութիւն կը ճանչցուի միայն մէկ երկու դարտուղութիւն՝ ուրեմն բառական շատուր բացառութիւն մը ունինք այս կէտին մէջ, ուր քի և քի լծորդութիւնը իրական և կանոնական կը դառնայ ընդհակառակը: Այսպէս քի և քի տառերը կը լծորդուին կամ կը չիթութիւն Վանի գաւառաբարբառին մէջ, հետեւալ օրինակներով. կը սկզբնաւորին՝ կսան-քսան. կսանական-քսանական. կսաննոց-քսաննոց. կսել-քսել. կսկսել (կըս...)-քսքսել. կսկսուիլ-քսքսուիլ (քծնիլ), կշել-

քշել. կշա՛-քշա՛ (հաւերը վանելու ձեւ). կշկշել-քշրշել (շուները). կօչ-քօչ (խոյ). կցմեղ-քցմեղ (սառիւ մատներու). կը՛ փկըը՛ փ-քը՛ փքըը՛ փ. կտկտալ (կըտ...)-քթ.քթա՛լ. կռթ-կռթոց-քռթ.քռթոց. կացա-քացա (caisse) եւն. : Դանի մը հատ ալ հակառակը. քեղըռթել-կեղել (սկրթել). քեղել-կեղ(ե)ւել : Կը վերջաւորին՝ աչկ, աչկել, աչկակապուկ, աչկախիոց, աչկլոս, աչկպա՛ց, աչկուել, մինչ ասոնց գրականն է աչխ, աչիւ, աչխոյս եւն. : Յետոյ՝ տեսկ-տեսք, տեսկով-տեսքով (տեսքոտ, գեղադէմ). անէծկ-անէծք, անէծկազիր-անէծքազիր. աղօթկ, աղօթկազիրք, աղօթկարող-աղօթիք եւն. : օխնիթկ-օրհնիթիք, օխնիթկազիր, օխնիթկախող-օրհնազիր, օրհնիթ.քահող. ոտկեր-ոտիեր. մէջկ, մէջկակուտոր, մէջկով, մէջկընէր-մէջիք, մէջկաղտոր եւայլն. ուշկ-ուշիք, ուշկաթալի-ուշիթալի, պարտկ - պարտիք, պարտկընտէր-պարտքընտէր, եւ դեռ ուրիշ բառեր՝ եթէ պրպտուի խնամով : Այս օրինակներէն կ'երեւայ թէ՛ գաւառաբարբառը ունի տառերու անյուսալի լծորդումներ, կամ լծորդութեան գաղտնի կարելիութիւններ, որոնք կանոնի ուժը ունին իրականին մէջ, միայն եթէ խորապէս ուսումնասիրուի բարբառը իր ամբողջութեամբ : Ասոր համար է որ կ'ըսեմ ու կը պնդեմ թէ՛ գաւառաբարբառներուն վրայ անդրադառնալու է լրջօրէն, լոյս աշխարհ բերելու է անոնց կոշտ, անտաշ ձեւը, հունչը, տարազը : Ընդդէմ այս նկատումով էր որ «գաւառիկ

բառարան»ս դասաւորած էի այն հնչումնաւոր տառակարգով, ինչպէս որ կ'ելլեն բառերը զիրենք խօսող ժողովուրդին բերնէն : Եթէ տպուելու բախտը ունեցած ըլլար ան, պիտի կրնար ծառայել, լեզուաբանութեան աշխատող քաջ բանասէրներու իբր նիհար նեցուկ մը՝ աղաւաղումի օրէնքներու պրպտութեան մէջ ալ՝ լս'են նպատակէն զատ : Զ և Զ տառերը, ինչպէս կը կարծուի, արդեօք կրնան լծորդ ըլլալ իրարու : Գրականին մէջ ո՛չ անշուշտ, բայց գաւառաբարբառին մէջ շատ ընտանիքներն : Այսպէս, զիկ-ձիկ (ինձ, ինծի) ամէնէն սովորական բառերն են մեր ռամիկ բարբառին մէջ, ուր յնաւ չէք գտնել ինձի, ինձ գրական ձեւը : «Փէտ տուր զի՛կ» կ'ըսենք, փոխանակ ըսելու «փայտը տուր ինծի» : «ձի՛կ ինչ» կ'ըսենք, փոխանակ ըսելու «ինծի ի՞նչ» : Այս պահուս միտքս կուգայ վաղուց ուշադրութեանս առարկայ եղած ծանօթութիւնը, զոր կարգացած եմ քաղաքիս Ս. Նշան Եկեղեցիի հին գործադիրներէն մէկուն յիշատակարանին մէջ՝ Ստեփան անունին համար : «Թորոս Աղբար»ին մէջ ալ (էջ 259-260 Բ. հատոր) կը գտնեմ հետեւեալը. «Եւ զկնի սահմանեալ կենաց ժամանակի իւրոյ ել յաշխարհէս՝ հաստակեալ ի վանքն Յիպնայ ի Պ. Հ. Դ. թվականի Հայոցս, և անդ է թաղեալ Ս. Նշապք ռսկերաց հորա ի վանքն Յիպնայ (Սեփանայ վանք)» : Կը նշանակէ թէ՛ ս և ց տառերը իրարու լծորդ եղած են և կրնան ըլ-

լալ, մինչ մեր բոլոր բառարանները պիտի ժխտէին այս իրողութիւնը: Դրապէս անլծորդ այս երկու տառերուն լծորդութիւնը գաւառաբարբառի մէջ ալ յաճախ կը տեսնուի. ինչպէս տղոցէր-տղոստէր, հացթուխ-խաւթուխ, սղոցդ ուր է-սղոսդ ուր է, և այլն: Ոչ միայն սարկելին, այլ նաեւ ամէն լեզուական խնդիրներու լեզուաբանօրէն պրպտումին մէջ, բանասէրը պէճֆ պիճի գգայ դիմելու գաւառական բարբառին, որ կը մնայ միշտ իր նախալեզուական բնիկ դրոշմներովը և պիտի հայթայթէ ամէն գրական բառէ աւելի յուսարեր և լուծելի տառեր, տարրեր և օրէնքներ՝ բառակաղմուծեան, կորուսման կամ փոփոխման, ձայնաշրջութեան և համաձայնութեան:

ՏԻԳՐԱՆ ԶԻԹՃԵԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԱՍԻՍ»Ի ՀԱՐՑՈՒՄԻՆ

Հայր մը արդելք կ'ըլլայ զաւկին ամուսնութեանը: Թերեւս իրաւունքներ ունի. հայր մը աւելի փորձառու է, քան որդին և կրնայ տեսնել այն շատ մը բաները՝ զորս իր խիստ խելացի զաւկին սէրէ կուրցած աչքերը չեն տեսներ: Հայր մը թշնամական զգացումներ չկրնար տածել զաւկին հանդէպ, կամ չկրնար անոր սիրային մրցակիցը ըլլալ՝ որպէսզի արդիւնէ անոր միութիւնը՝ աղջկան մը հետ, որուն միակ յանգանքը հայ-լայֆէն չըլլալն է: Զաւկին կը մնայ՝ հայրը համոզել, թուելով այն ձիրքերը՝ որոնց տէր է իր խտէալը:

Հասկցնելու է թէ բարձր դասակարգի աղջկան մը զգացումներէն աւելի աղնիւ, մաքուր, խտէալ զգացումներ կը կրէ իր ընտրելին: Բայց եթէ նորէն անդրդուելի մնայ և իր մերժումին պատճառաբանութիւնները տկար և անտրամաբանական ըլլան, և ան պարզապէս իր կամքը, խօսքը քալեցնելու քմահաճոյքը ունենայ և անգամ մը «ո՛չ» ըսած ըլլալուն համար պնդէ, դարձեալ յուսահատելու չէ: Ինչո՞ւ մեռնիլ: Կո՞յ ապահովութիւն մը որ ատով կարելի պիտի ըլլայ միանալ սիրուածին: Այդ տեսակ մահի մը մէջ ի՞նչ հաճոյք, ի՞նչ վայելք կայ: Մանաւանդ սիրահարութեան համար մեռնիլ չարժեք...: Դանի՞ աղջիկ անձնասպան եղած են երիտասարդի մը համար: Այո՛, կան անձնասպան աղջիկներ, բայց խաբուած, լքուած և ապօրէն զաւկի մը մայր ըլլալու պարագային միայն, ան ալ ամօթ մը ծածկելու համար: Երիտասարդ մը այդ տեսակ մերժումի մը պահուն ի՞նչ վախ ունի պատիւի տեսակէտով: Խօսքը դրժած պիտի ըլլայ. հոգ չէ՛. եթէ իրենց սէրը այնչափ դուրաւոր է և իրար աղէկ կը հասկնան, թող սպասեն և յուսան: Տիւմայի «սպասել և յուսալ» կրնայ աղէկ դեպքեր մը ըլլալ իրենց:

ՀԱՅԿ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍՍՏԵԱՆԻ

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՄԱՍԻՍԻ ԱԼՊՈՍԻՆ

Շատ մեծ շնորհակալութեամբ ստացայ Ալպոմը Շատ սիրուն, ճաշակաւոր և լուրնտրուած է:

ԶԱՊԷԼ ԵՍՍՅԵԱՆ

ՓՐԿՈՂ ԳԱՂՏՆԻՔԸ

Ազաչած էր որ սենեակէն դուրս չպիտի ելլէ՝ մինչեւ որ զաւակը տեսնէր :

Սիրաքեան՝ պարկեշտ և համեստ երիտասարդ մը՝ կինը կը սիրէր այնպէս խնայէս ո՛չ մէկը կրցած է սիրել դեռ :

Բժիշկը շունչ մը առաւ : Արիւնաթաթաւ աջ ձեռքը բարձրացուց ու ձախտին տարաւ, մինչդեռ ձախը՝ forcepsը գետին կը նետէր :

Սխալ շարժում մը՝ գլուխէն կամ siègeէն առնուելիք զաւակը՝ *présentation de l'épaule enclavée*ի դարձեր էր, այնպէս որ բացարձակապէս պէտք էր պղտիկը մեռցուցած առնել՝ մօրը վտանգ մը չպատճառելու համար :

— Աստուծա սիրուն, կը կրկնէր Սիրաքեան, մի՛ պնդեր որ բաժնուիմ կնոջս քովէն :

Իրեն համար սոսկալի բան էր՝ ստիպուած ըլլալ կինը ուրիշ էրիկ մարդու մը խնամքին յանձնել, ձգել որ սնիկա քննուի օտար մարդու մը կողմէ, մարմինն ամէնէն թաքուն խորշերը ղննուին ձեռքէ մը՝ որ իրենը չէ՛ր ապահովաբար : Երբեք չէ՛ր հաշտուած բժիշկներուն հետ : Իր սիրած կինը ամէնէն արտակարգ, ամէնէն արտառոց գաղափարները ներշնչած էր իրեն. ստոյգ, իրական սէրը, ահռելիօրէն նախանձոտ և բժանդիր դարձուցած էր զինքը :

Աչքերովը սկսաւ հետեւիլ բժիշկին աճապարոտ շարժումներուն : Կատաղութիւն մը եկաւ վրան, սիրտի ցաւաղին տառապանք մը՝ որ կը գրգռէր զինքը, կ'ահաբեկէր, կը պրկէր :

Բժիշկը՝ գիշատիչ, փայլուն, երկար գործիքով մը սկսաւ կտրտել մարմինը հէք պղտիկին : Նախ գանկը պայթեցուց, վիզէն կտրեց, թեւերը մկրտեց, փորոտիքը դուրս հանեց յօշոտելով Ciseaux Duboisն ահռելի դեր մը կը խաղար : Տարբեր կերպով չէր կրնար մայրը աղատել :

— Կինդ աղատեցաւ, ըսաւ Սիրաքեանի, նայուածքը մարմինի այդ սաղմնային աղտոտ, անգոյն, տխուր զանգուածէն չբաժնուելով :

— Այո՛, բայց զաւակս :

— Երկուքէն մէկը, կարելի չէր երկուքն ալ աղատել :

Սիրաքեան հասկցաւ որ բժշկական սխալ քննութեան մը դո՛նը եղած էր զաւակը, որուն ծնունդին այնքան անհամբերութիւնով, այնքան անձկութիւնով սպասած էր :

— Տօքթէօ՛ր, զաւակս մեռցուցի՛ք, ըսաւ Սիրաքեան, լալով :

Սոսկալի կերպով քրտնած էր բժիշկը : Յուցամատը շրթունքին մօտեցնելով՝ լուծիւն սլատուելեց, որովհետեւ, կ'ըսէր, կրնայ վտանգաւոր ըլլալ հիւանդին համար :

Տիկին Մաթիլտ տեղեկութիւն չունէր անցած դարձածէն. աչքերը փակ, դրեթէ մարած վիճակի մէջ, ամբողջ մարմինովը գալարուելով, պառկած էր անկողինին վրայ:

Բժիշկը Սիրաքեանը դուրս տարաւ:

— Լուեցէ՛ք, կ'աղաչեմ, յարեց դողդալով ու աճապարկոտ. բարձր խօսիլը կրնայ վտանգ մը պատճառել ձեր կնոջ. յետոյ, քանի որ ստելը իմ ամէնէն ատած մոլութիւնս է, խոստովանիմ որ զաւակնիդ սխալ զննութեան մը զոհը եղաւ...: Ձեր լուութիւնը կեանքս պիտի փրկէ...: Դիտէ՛ք որ դեռ նոր Եւրոպայէն վերադարձած եմ, Պոլսոյ մէջ առաջին փորձս է որ կ'ընեմ... եթէ այս լուրը տարածայնուի, երիտասարդ բժիշկի մը ապագան, պատիւը խորտակած պիտի ըլլաք...: Եղածը եղած է... կը պաղատիմ, մանաւանդ որ օգուտ մըն ալ չիկայ արդէն... զոնէ խօսք տուէ՛ք որ մարդու չպիտի ըսէք... կ'երդնո՞ւք...

Սիրաքեան՝ բարի և ազնուական հոգի՝ սկսաւ խորհիլ: Ու, վայրկեանբար, ելեքտրական բլիւէ մը դղրդուածի պէս, ըսաւ բժիշկին.

— Թո՛ղ ըսածդ ըլլայ... մարդու չպիտի ըսեմ...

Երբ իր անհուն երախտագիտութիւնը յայտնած կը մեկնէր մանկաբարձը, Սիրաքեան դողալ սկսաւ: Ինչպէ՛ս կրցած էր հանդուրժել այդ արարքին: Ինչպէ՛ս չէր բռնած այդ մարդուն թեւէն, երբ ուղցիկ, փայլուն, մահազգեցիկ մկրատին ծայրովը կը փորէր, կը խառնէր, կը բղքտէր իր արիւնէն ծնունդ առնող այդ պզտիկին ճզճիմ մարմինը: Ինչպէ՛ս ձգած էր որ մեկնի անիկա, մանկասպանը, իր հաւանութիւնը առնելէ վերջը մանաւանդ:

Իր խիղճին, իր զգացումներուն, սկզբունքներուն մէջ կռիւ մը ծագեցաւ. ինք անդուլթ հանդիսատեսն էր այդ անողոք տուայտանքին: Բարութիւնը, խիղճին ձայնը յաղթանակը կը տանէր վերջապէս. մեղքեցաւ երիտասարդ բժիշկին և ինքզինքը մխիթարեց ուրիշ կերպերով:

Խոստումը կատարեց Սիրաքեան. նոյն իսկ իր կնոջը չէր պատմած այդ սիրտ բղքոող տեսարանը: Տարիներ վերջը, արդէն երկու զաւակի ալ տէր, երեւակայութիւնը խռովող պզտիկ ցաւեր հաղիւ կ'ունենար: Մոռցած էր իր առջի զաւակին տխուր վախճանը: Կինը կը սիրէր միշտ, ինչպէս նշանածութեանը չրջանին, ինչպէս կը խորհէր, կ'երազէր սիրել: Իրարու մէջ կ'ապրէին, և երկուքն ալ երբեմն զարմանքով իրարու կ'ըսէին թէ՛ ինչպէ՛ս կարելի եղած էր այդպէս բաժնել մաս մը ամբողջէն: Ինքզինքնին կը նմանցնէին այն բիւրեղէ ամբողջական գեղօրին, որ երկուքի բաժնուած օրը՝ կ'ոչնչանայ:

Սակայն Սիրաքեանի պաշտօնը այնքան հասութաբեր և մեծ բան մը չէր: Խնայողութիւնով կ'ապրէին: Տասնընչինգ տարի կ'ըլլար իրենց

ամուսնանալը: Երկուքն ալ դեռ երիտասարդ, առողջ, երազուն հոգիներ մնացած էին, օխուած այն հալուադիւտ խառնուածքով, որ կեանքէն և իր շուրջիններէն յաւիտենապէս չձանձրանալու առաքինութեան արժէքը կը ճանչնայ:

Օր մը, իրենց երկու զաւակն ալ անկողին ինկան. պարզ հարբուխէ մը սկսող տկարութիւն մը՝ որ հետզհետէ աղէկ չնայուելով, աղէկ չլնանաւելով եկած յանգած էր սոսկալի հիւանդութեան մը: Ի՞նչ ընելնին չէին գիտեր. շուարած էին երկուքն ալ, Մաթիւտ և Սիմոն: Հիւանդութիւնը ուրիշ ցաւի չնմանիր, պահանջկոտ է ան, իրեն հպատակեցնել գիտէ ամէնէն աներկիւզը մարդերուն: Երբ Սիրաքեան կը խորհէր նիւթական անձուկ կացութենէ մը առաջ եկած բոլոր այդ ցնցող անպատեհութիւններուն, բնազդաբար միտքը կ'իյնար մահը, անողորք, անագութ, անիրաւ մահը, որ պաղարիւնութեամբ մէկ օրէն միւսը ձեռքէդ կը խլէ սիրական մը: Իրենց տունին մէջ այսքան ծանր պառկող հիւանդ չէին ունեցած երբեք: Տարիներ ամբողջ աղօթած էր, յաւիտենական առողջութեան մը տենչանքէն դրդուած, որովհետեւ վստահ էր թէ, իրենց դրամական անկարողութիւնը, բժշկական խնամքի պակասը՝ հիւանդը պիտի իջեցնէր հողին մէջ, ցուրտ, թաց, սոսկալի հողին մէջ:

Եկած էր պարագայ մը՝ ուր աղօթքները ա'լ չէին կրցած իրենց աղգեցութիւնը ունենալ: Երկու զաւակներն ալ պառկած էին դէմ դիմաց, սենեակը գրաւելով, անգիտակից, ցնորակոծ ու անղգաց լիննալքու մով մը:

Կինը՝ աւելի համեստ և աւելի՝ պարզամիտ, առաջարկեց ամուսինին որ՝ խնդրագիրով մը Աղքատախնամէն բժիշկ մը բերել տայ: Անօգուտ առաջարկ մը չէր ատ: Սակայն Սիրաքեանի հպարտութիւնը ու իրաւացի մեծամտութիւնը խայթելու հանգամանք մը ունէր, իր մարմինը յուսահատական նոպաներու մէջ գալարել տալով: Առանց բժշկական խնամքի՝ զաւակները պիտի մեռնէին: Ի՞նչ, իրա՞ւ էր որ ինք այդ տեղերը ինկած էր, ուրիշէն ողորմութիւն, գթութիւն խնդրելու կարօտ, առանց որոնց հաւանական էր որ կորսնցնէր իր միակ՝ յոյսերը, միակ մխիթարութիւնները:

Իրենց փողոցին ծայրը կարեւոր անձնաւորութիւն մը կը բնակէր, զոր կը ճանչնար Սիմոն: Գնաց աղաչեց և քարդ մը առաւ Աղքատախնամին ներկայանալու համար:

—Յուդուելու բան մը չիկայ, ըսաւ Գէրեան՝ Սիրաքեանի. մտածէ՛ որ Աղքատախնամին անդամները յաճախ կը խնամուին ձրիաբար ա'յն միեւնոյն բժիշկներէն, որոնցմէ մէկը պիտի գայ և զաւակներդ խնամէ: Բա՛ջ եղիր, աշխարհք է, չունենալ ամօթ բան մը չէ:

Հինգշաբթի առտու բժիշկը ներկայացաւ, բարձրահասակ, չքեղ կաղմով, բարեկիրթ անձ մը, համակրելի և ընկերական:

Սենեակին դրանը առջեւ իրարու նայեցան բժիշկը և Սիրաքեան։
Ձիւրար անգամ մը տեսած ըլլալ կարծեցին, սակայն բան մը չհամար-
ձակեցան ըսելու։ Սիրաքեան բժիշկը շատ փորձ, չա՛տ կենցաղագէտ
գտաւ, մինչդեռ Տօքթէօրը՝ տարիքէն առաջ ծերացած, խնկած կը դա-
նէր Սիւմնը։

— Սրքեօք մէկո՞ւն նմանցուցիք զիս, ըսաւ Սիրաքեան, հետաքրքիր
ակնարկ մը սեւեռելով խօսակիցին դէմքին վրայ։

— Ո՛չ, այսինքն... ո՛ւր են հիւանդներդ։

— Հո՛ս, Տօքթէօ՛ր։ Եւ մատովը ցոյց տուաւ երկու աղկաղկ, տկար,
տժգոյն պղտիկներ՝ որոնց քովը չուքի մը պէս կը շարժէր սիրական
մայրերնին։

Երկարօրէն քննեց։ Աղէկ խնամել պէտք էր. շաքաթէ մը պիտի
աղէկցնէր բոլորովին։

Տօքթէօր Սամեան, Աղքատախնամին բժիշկը՝ կինը տեսնելուն պէս
ապշեցաւ, չփոթեցաւ։ Ի՛նչ նմանութիւն։ Ուրիշ յիշատակ մը այսքան
տխուր իրականութիւնով թերեւս չցցուէր իր առջեւ, մղձաւանջի պէս-
զինքը հալածած ըլլալով արդէն։

Յաջորդ օրը երկու անգամ հիւանդները նայելու եկաւ։ Այս անգամ
սենեակին décorը չա՛տ ընտանի թուեցաւ իրեն, հնութեան դրոշմը
կրող, բայց մաքուր, աղէկ պահուած նուիրական առարկաներով, Այ-
վազով, սքիի լուսանկարը, խնամքով յարդարուած, որուն նմանը չէր
յիշեր ուրիշ տեղ մը տեսած ըլլալ։ Ծաբոնական սիրուն պնակներ,
պղտիկ ճաշակաւոր մատենադարան մը՝ որուն մէջ բժշկական և բանաս-
տեղծական հատորներ կը հանգչէին քով քովի, մտերմօրէն։

Դեղերը ի՛նք կը բերէր և ծախք մը ընել չէր տար ծնողքին։ Աստ-
ուած՝ զրկած էր արդեօք այս մարդը, կը խորհէր Մաթիւտ, գոհունակ
ժպիտով մը ծիրաներփելով դէմքին տժգունութիւնը։ Իրիկունը հիւանդ-
ները աւելի աղէկ կ'երեւային, հետզհետէ խելաբերուած, իրենց շուրջը
անցած դարձածին գիտակից։

— Բեզի բան մը ըսե՛մ, ըսաւ Սիւմն իր կնոջը, այս բժիշկը, հա-
րիւրին հարիւր, այն մանկաբարձն է, որ առաջին անգամ մեռած դա-
ւակդ առաւ։

— Հէ՞...

Ծիգ մը ըրաւ խոստումը պահելու համար նորէն։ Ձէր սխալեր, ա՛յն
միեւնոյն բժիշկն էր որ՝ իր առաջին զաւակը յօշոտելով մօրմէն անջա-
տեր, մօրմէն բաժնեւէր էր։ Այն միեւնոյն բժիշկն էր՝ որ հիւս, երախ-
տագիտօրէն, մեռցուցած պղտիկին արհաւրոտ, ահաբեկիչ յիշատակէն
զգածուած, միւս երկու պղտիկները կը դարմանէր, ուշադրութիւնով,
ամէ՛ն պէտք եղած դեղ և խնամք չխնայելով։ Գաղտնիքն էր որ կը
փրկէր զինքը և իր զաւակները։ Փրկող գաղտնիքը...։

Սիրաքեան չորրորդ օրը միտքը դրաւ խօսքը բանալ բժիշկին առջեւ : Ատեն չձգեց այս վերջինը . կարծես գուշակելով , շուտ մը անհետացեր էր . գաղանիքը կը սարսափեցնէր ղինքը : Զգայուն , աղնիւ , մարդասէր բժիշկ՝ յանցաւոր կը գտնէր ինքզինքը միշտ , և տարօրինակ յուզումով մը կը յիշէր ա՛յն պարագան թէ իր բժիշկի կեանքին մէջ եթէ իր ձեռքին տակ մէկը մեռած էր , ա՛ն ալ Սիրաքեանի դեռ աշխարհ չեկած զաւակն էր , զոր կտոր կտոր ընելով դուրս առած էր մօրը արգանդէն :

—Աղէ՛կ է առողջութիւննին . պէտք չկայ որ ա՛լ գամ , յարեր էր Տօքթէօր Սամեան , խուսափելով ուրիշ բառեր արտասանելէ և արագօրէն ինքզինքը փողոց նետելով :

Երբ այր և կին սենեակ վերադարձան , չըմինէին վրայ գտան գորշ պահարանով նստակ մը : Սիրաքեան բացաւ դայն անհամբերութեամբ : Պահարանին մէջէն երեք հատ պանքնօթ գետին ինկան :

«Մեղցուցած պզտիկիս յիշատակը զիս անհանգիստ ըրած էր մինչեւ հիմա . ուրախ եմ որ դարմանեցի սխալս , միւս երկու զաւակներդ բուժեցի : Մէկին մահը պատճառ եղաւ ուրեմն որ միւս երկուքը փրկուին : Ա՛ս ալ թող գաղանիք մը մնայ քովդ , ինչպէս առաջինը մնաց . շնորհակալութիւններս . այս տանըհինգ ոսկին հիւանդներուդ ապաքինումի՛ն յատկացուր» :

Երբ ընթերցումը աւարտեց , յուզուած չեշտով մը ամէն բան պատմեց կնոջը այն առեւն :

Կինը քարացած մնաց , գունատ , տխուր , սարսափահար :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԵՐ ԱԼՊՈՄԻՆ ՇՈՒԲՁԸ

Հաճոյքով կը դիտենք որ՝ ճի՛շդ մեր ակնկալութեան համաձայն՝ Մասիսի Ալպօմը ամէն կողմ արժանացած է բարձր գնահատութեան մը , ինչպէս կը տեսնենք մեզի դրկուած շնորհաւորական և խնդակցական նամակներէն , զայն ստացող բաժանորդներէ : Գրագէտ բարեկամներ ալ , որոնք առիթը ունեցան տեսնելու այդ գեղարուեստական աշխատութիւնը , նոյն ջերմ գնահատութիւնով ու սքանչացումով է որ կ'ողջունեն զայն , մինչեւ անգամ մասնաւոր բաժանորդագրութիւն մը յատկացնելով անոր՝ տիրանալու համար զայն ստանալու իրաւունքին : Հաճոյքով արձանագրելէ ետքը՝ մեր ձեռնարկին գտած այս ընդունելութիւնը , կ'ուզենք աւելցնել , մեզի եղած դիմումներուն պատասխանելու համար Թէ , ամէն անոնք՝ որոնք Ալպօմին պայմանաժամէն դուրս եղող ժամանակի մէջ բաժանորդագրուած և վճարած են , զուրկ կը մնան զայն ստանալու իրաւունքէն : Ասոր համար՝ կը ծանուցանենք Թէ՝ չենք կրնար զոհացում տալ իրենց խնդրանքին : (Այս մասին տեսնել Մասիսի Թիւ 15ը) :

ՊԱՏԱՍԽԱՆ «ՄԱՍԻՍ»-Ի ՀԱՐՑՈՒՄԻՆ

Մասիսի Հարցումին [Թիւ 17] «Ընկերային լուրջ հարց մը շօշափող» հանգամանքը պատճառ մըն է որ՝ զբաղինք անով, ինչպիսի պէտք է որ ան զբաղեցնէ նաև մեր գրողները:

Յուշարարի դեր կատարել՝ վայրկեան մը՝ աւելորդ չըլլայ թերեւս, յիշեցնելու համար նիւթը երկու տողով: Հարուստ, գեղանի երիտասարդ մը՝ սիրահարուած է աղջկան մը: Ետըն հայրը իրենց ամուսնութիւնը արգիլելուն՝ պարոնը այդ ընդդիմութեան դէմ անձնասպան կ'ըլլայ: Արդ. «Ա.—ձի՛շո է. կ'արժէ՞ և կ'արդարանայ այդ արարքը կրօնքին և ընկերային՝ նկատումներուն առ. չեւ. Բ.— Ի՞նչ է հօրը իրաւասութեան սահմանը՝ տղուն կամքին վրայ, Գ.— Սիրահարութեան մը, աղջկան մը համար ներելի՞ է կեանքէ հրաժարում երիտասարդի մը, որ ընկերային, ֆիզիքական ու բարոյական մեծ ձիրքերով օժտուած է»: Նիւթը անշատաբար մասերու բաժնելով ուսումնասիրել ու վերլուծելը ընդարձակ աշխատութիւն մը պիտի ըլլար: Ա՛յնքան՝ միւս կողմէ՝ կարելի չեմ գտներ ես քանի մը տողով անոր ամբողջ ցաւաղին հոգեբանութիւնը ցայտեցնելու: Բայց արդէն ի՞նչ են այդ հարցական ստորաբաժանումները, եթէ ոչ՝ իրար ամբողջացնող, իրար լրացնող պայմաններ՝ խնդիրին ուշադրաւ ու շահեկան բնութիւնը շեշտելով միեւնոյն ատեն՝ պարզուելիք հայեացքներուն ու գաղափարներուն ուղղութիւնը դիւրացնելու կոչուող:

Ա.— Հակառակ կրօնական աններողութեանց ու հաւանութեանց զարմանալի հակասականութեան մը մէջ գտնուելուս, կրօնքը — Եկեղեցին — դարձեալ հաշտ աչքով չի նայիր անձնասպանին, ինչպէս միշտ չէ նախած: Ուրիշ խնդիր՝ եթէ հիւանդութիւն մըն է պատճառ, շարժառիթ կամ պատրուակ՝ այդ եղանակով կեանքէ հրաժարումի մը: Գիտական քիչ կամ շատ ճիշդ վկայութիւն մը՝ հոս պիտի բաւէր եկեղեցական խոժոռ ու խիստ դէմքերու ծանաճումին, յոնքերու պոստումին առաջը առնելու: Այլապէս, Եկեղեցին, կարծես իբր պատիժ, ինչպէս յայտնի է, առանց մեռելական տարրուղու-

թեան՝ գերեզմանատան լքուած մէկ անկիւնը կը դրկէ ծաղուելով՝ մարմինը անձնասպանին, որ չէ զիտցած իր կեանքին՝ այդ մեծ ու թանկագին բարիքին յարգը, զայն չնչելու ոճիւր զործելով: Ընկերային առիդ կեանքը և իր նկատումները, Օ՛հ, երբեք, երբեք չեն արդարացներ այդ արարքը: Եւ արդէն ի՞նչ պէտք կար ատոր՝ երբ այնքան առատ են զայն վրիպեցնելու, նոյն խիստ ատոր վրայ մտածելու միջոց իսկ չձգող քիչ կամ շատ հանճարեղ եղանակները և գիւտերը... Արդիականութիւնը, modernisme, պատգապէս կ'արգահատի, եթէ երբեք չի խնդար՝ «Ընկերային, ֆիզիքական ու բարոյական մեծ ձիրքերով օժտուած» երիտասարդի մը այդ կերպ մահացումին վրայ, զոր չուշանար պարուրելու նոյն իսկ՝ հեղնութեան լայնուրտ շարժութեամբ մը: Սառն սկեպտականութիւնը անողոք է և նոյն իսկ ծաղրալից՝ իր կեանքը վրայ տուող հարուստ, գեղեցիկ ու ապագայ խոստացող երիտասարդի մը այդ ասպետական (!) արարքին նկատմամբ: Մեռնի՛լ աղջկան՝ մը համար, ի՛նչ հինգած, démodé դիւցազնութիւն: Արդիականութիւնը, Սիտի, Ռօլանի և նոյն իսկ Տօն Քիշթի անուններէն մեծ բան մը չի հասկնար: Իր նշանաբանն է՝ հնարամտութեամբ, ճկուն ճարտարութեամբ ու toupetով՝ յաջողիլ սիրող աշխարհին մէջ, եթէ մանաւանդ հարուստ է մէկը, գեղեցիկ ու երիտասարդ, (հիմա ունեւոր ծերերն ալ կը փնտռուին) լմնցա՛ւ. յաջողութիւնը կատարեալ է: Ձի սիրահարի դիւրաւ. կը թողու որ իրեն սիրահարին: Բայց եթէ սիրահարեցաւ և ամուսնանալու անյաջողութեան մը վտանգ կայ, կը դիմէ ոչ թէ անձնասպանութեան, (ատիկա շատ badal բան պիտի ըլլար), այլ, օրինակ, առեւանգումին:

Բայց հայրական ընդդիմութեան մը պարագան: Ահա կէտ մը՝ որ սակայն շուտեցնելու, շփոթեցնելու բնութենէն զուրկ է: Երիտասարդը իր դէմը ունի հայր մը՝ նոյն չափ յարգուած ու սիրուած՝ իր ընկերային բարձր դիրքին պատճառով: Եւ այդ հայրը ժխտական պատասխան մը կուտայ տղուն խնդրած հաւանութեան: Դիտուած չէ՞ որ այս կարգի արգելքներու շատե՛ր հանդիպած են, խզումներ, ծնողական յարկէ հեռացում:

ներ և չն. պատահած են և «անառակ որդին կամ աղջիկը» իրենց նպատակին հասնելէն ետքը՝ օր մըն ալ... Յեւաքաց ընդունուած են դարձեալ, և աւելի՛ գորովագին խանդաղատանքով մը, միեւնոյն յարկին տակ, զոր լքած, կամ ուրկէ ճամբուած էին!!!:

Բ. — Հօր մը իր տղուն վրայ ունեցած իրաւաստութեան սահմանը՝ չեմ կարծեր որ անոր չափահասութենէն անդին՝ անոր սիրտի հաշիւներուն և կամքին վրայ կորորէն, անիրաւօրէն բռնանալու չափ լայն ըլլայ: Հայրական ո՞ր խիղճ կամ դատողութիւն պիտի արդարանար՝ այս կերպ շարժելով: Մանաւանդ երբ երկու կողմն ալ զիրար լաւ ճանչցած ըլլալէ ետքը՝ վախ կայ որ այդ տեսակ անհաշտ արարքերում մը աննպատակ հետեանք մը ունենայ: (Բայց գտնուած չե՞ն հայրեր՝ իրենցինէն շատ խոնարհ գիրքի ու աստիճանի վրայ գտնուող աղջիկներու հետ ամուսնացող, որոնք վերջէն, զուգահիշւորէն, միեւնոյն պայմաններուն տակ՝ ամուսնանալու ելլող իրենց զաւկներուն արգիլել ուզած են նոյն բանը... Ի՞նչ իրաւունքով): Հայր մը շատ շատ՝ ժառանգութենէ կրնայ զրկել իր տղան, երբ տեսնէ թէ ան իր բարձանքներուն համաձայն չի շարժելով՝ ընտանեկան պատիւը աղարտող միութիւն մը կնքած է: Բայց իրաւունք չունի արգելք ըլլալու անոր պատճառով՝ ամուսնութեան, իր ուզած աղջկան հետ, հարուստ ըլլայ ան կամ աղքատ: Դիրքի անհաւասարութիւնը արդարեւ նալի բանաւոր պատճառ մը չի կրնար նկատուիլ՝ յամառ ընդդիմութեան մը մէջ ամբաշարելու: Կը բաւէ որ երկու կողմէ պատշաճ անաղարտ մնացած ըլլայ: Հայրերուն ի՞նչ պէս ներել միեւնոյն բանը՝ զոր իրենք չեն ներեր իրենց զաւկներուն:

Ուրիշ բան մըն ալ կայ. երիտասարդը ենթադրենք պահ մը իր հօրը ըրած դիմումին մէջ՝ անդադող ու յուսավրէպ: Բարեկամական ազգեցիկ միջամտութեան մը պարագան հօյը մօտ՝ ի նպաստ տղուն՝ փորձուած է արդեօք: Եւ կամ, այս վերջինը ընդունելով իբր կամքի տէր և մեծ ձիրքերով օժտուած երիտասարդ մը, ժամանակ մը պաշտարին համբերութիւնը ունենալու չե՞ն, փոխանակ ամուլ զիրազգածութեամբ մը կամ արժանապատւութեան վիրաւորանքին ցուովը օրօրուե-

լով կորստելու՝ իր հաշիւին ի նպաստ բոլոր կարելի միջոցներուն գործածուելուն սպասելով:

Գ. — Այս նկատողութիւններէն անմիջապէս անցնելով՝ բուն կէտին գտնելու, Հայրական արգելք մը բնականաբար տեղի ունեցած է՝ աղջկան ընկերային աստիճանին խոնարհ կամ անշուք ըլլալուն հետեանքով՝ տղուն հետ անոր ամուսնութիւնը անյարմար նկատուելուն: Այս պարագան նուազ կարեւորներէն չէ: Պահ մը միջակ կամ համեստ դասուն պատկանող դէմք մը ենթադրենք ուրեմն այդ աղջիկը և ընդունինք որ՝ երիտասարդին հայրը քացարձակապէս ընդդիմացած է այս պատճառով՝ իրենց ամուսնութեան՝ հակառակ բոլոր աղաչաւոր դիմումներուն: Չմտնանք վերջի թէ՛ երիտասարդը ցոյց կը տրուի իբր մէկը՝ օժտուած՝ ընկերային, ֆիզիքական, ինչպէս բարոյական մեծ ձիրքերով: Արդ, այս տեսակ ձախողանքի մը դէմ, երիտասարդը պէ՛տք է վստահի մի՛ միայն ի՛ր իսկ ուժերուն, ի՛ր իսկ միջոցներուն, և որոշէ հրաժարիլ... ո՛չ թէ իր կեանքէն, իր սէրէն, այլ... հօրմէն ինչնալիք ժառանգութենէն: Խոտացող երիտասարդ մըն է ան, և ապագայ մը ունի աչքին առջեւ: Իր սիրուհիին հետ համախորհուրդ à l'américaine միութիւն մը կնքելով՝ պէ՛տք է նետուի գործնական աշխարհին մէջ, կեանքի պայքարը մղելու համար:

Ոմանք ծովը կամ գետը կը նետուին... պայմանով որ խորունկ ըլլայ ան, երբ մանաւանդ քաջ լուրդող ալ են, ուրիշներ՝ զգանկաբանութեան մէջ և կամ ճեւղիկով կատաղի հակառակորդներ կը դառնան... դառնանալով սիրային անյաջողութենէ մը: Կան որ կուսակրօնութեան մօտ ու անհրապօրյր ասպարէզին կ'ապաւինին: Ամերիկա՛ այս մասին recordը կը պահէ: Միլիոնաւոր տէրի տղանք չե՞ն գտնուած հոն՝ որոնք երգչուհի կամ դերասանուհի սիրահարելով հրաժարած են միլիոններէ և թատերաբեմ, երկամուկի վարչութեան մը կամ գործարանի մը պաշտօնէայի համեմատ դերը նախընտրած են՝ օգտակար ու արդիւնաւոր կեանքէ մը դասալիք ըլլալու տեղ և յաջողած են: Չ՝ մարիտ ասպետութիւնը հո՞ղ է անա, որ միայն հիացում կրնայ պատճառել անպայման՝

•իր բարոյական կորովին, տկուրն նկա-
րագիրին գերազանցապէս պերճախօս ար-
տայայտութեանը մէջ:

Եզրակացութիւն. — Ակնարկուած առաւե-
լութիւններով օժտուած երիտասարդին անձ-
նասպանութիւնը՝ ներկայացուած պայմաննե-
րուն տակ՝ կ'արդարանայ ուրեմն, մանաւանդ
որ կը հակասէ՝ ալ՝ իր կացութիւնը փրկելու
բաւոյ ձիրքերով՝ պատահած արարքին,
որուն չպիտի՝ սպասուէր, և որ պարզ
զասպարութիւն մը կ'ըլլայ միայն, աւելի արդա-
հատանքի արժանի՝ քան անկեղծ համակրու-
թեան...:

ՄԻՋՐԱՆ ՌԵՂՈՒՐԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Վերջերս մեռաւ Վրացացի մեծա-
նահալ բանաստեղծ Անսաէ Թէօ-
րիէ: Բանաստեղծը իր հետեւեալ
հասուածով կը նկարագրէ իր
բանաստեղծ ըլլալուն պարու-
զաները:

ԱՆՏՈՒԷ ԹԷՐՈՐԻԷ

Իմ ճշգրիտ բանաստեղծ եղայ

Հայրս եւ որ առաջին անգամ ակամայ
զգացնել տուաւ բանաստեղծական յանգեռու
երաժեշտականութիւնը եւ դիւրութիւնը:
Զմեռուան իրիկուն մը, երբ մայրս կը հս-
կէր շագանակներուն վրայ, որոնք կը խո-
րովուէին մոխիրին մէջ, եւ ես լամբարին
աղօս ցոլիւն զայն պարտականութիւններս
կ'աւարտէի, խօսքս դարձաւ յանկարծ մէկու
մը վրայ որ տանաւորներ կը յորինէր: Այս
խորհրդաւոր իմաստ մը ունեցող բառին,
ոտանաւորին վրայ բացատրութիւն ուղեցի:
Հայրս, կրցածին չափ հասկցաւ ինձի ար-
ձակին եւ բանաստեղծութեան տարբերու-
թիւնը եւ համառօտ կերպով սորվեցուց համ-
բանքի եւ յանգեռու կանոնները: Ինձի ար-
տաստվոր բան մը բուռեցաւ, գաղափարները
յանգով արտայայտելու այս եղանակը:

— Եւ դուն, ըսի անոր, պիտի կրնայի՞ր
ոտանաւոր գրել:

— Բայց անհուշ, ըսաւ խնդալով:

Թերք մը բուռք առաւ եւ հետեւեալ
հաւեակը գրեց մասիտով:

Ինկէ՛ք, ինկէ՛ք քօշ տերեւներ մտերիմ,
Այս շիրտմած մարման փողով ծած-
կեցէ՛ք,
Իմ յուսահատ մօրքս աչիկն տեսնալէ
Ծածկեցէ՛ք վայրն ուր ես պիտի ընկ-
չուզիմ...:

Ապշած մնացի: Այս հառեակը՝ համակ
նուագ, կիներգութիւն էր. չեմ գիտեր ինչ
մը լսուէր որ կը դիւթէր, կը հմայէր զիս. եւ
մեծ հիացում մը սկսայ զամէլ հօսք մ'աւ-
որ որ այնքան դիւրութեամբ գրեց այդ տա-
նաւորը:

— Ի՞նչպէս, կը պոռայի ամբողջ ձայ-
նովս, դո՛ւն գրեցիր ասիկա:

Բայց անիկա շատ անկեղծ եւ խղճամիտ
էր զիս հրաւիր մը ազդեցութեամբ զայն եր-
կարօրէն չձգելու համար:

— Ո՛չ, ըսաւ, այս հառեակը իմա չէ:
Մէլլովուա անուցով վարդամեղիկ բանաս-
տեղծ մը հեղինակած է զայն:

— Թշուառութե՛նէ մեռած է անհուշ, և
տեղուց մայրս, որ հիւսնդանոցը բանաս-
տեղծներուն վերջին կայսնը կը նկատէ:
Բայց մայրս կրնար կրցածին չափ բանաս-
տեղծութեան եւ բանաստեղծներուն հակա-
ռակ խօսիլ: Հարուած իր նեմարիտ ազդե-
ցութիւնը բանեցուցած էր: Ոտանաւորի այս
չորս տողերը տարօրինակ ընկած էին զիս,
ցնցում մը որուն քրտացումները յալիտե-
նապէս պիտի տեսնէին:

Թարգմ. Ն. Ե.

ԱՆՏՐԷ ԹԷՐՈՐԻԷ

«ԳԱՐՄԷՆ»

Խափօքիները օր օրի Ամերիկայի մէջ
կարեւոր դիրք մը զբաղեցնել կը սկսին: Վեր-
ջերս արտաստվոր ներկայացում մը տուած
են Նիւ Եօքի քաղաքներէն մէկուն մէջ:
Դերասանները, երաժիշտ նուագածուները,
ինչպէս նաեւ բոլոր ներկայները խափ-
օքիներ են եղած: Արտաստվորական այս
մեծ ներկայացումը խիստ մեծ յուզում
առաջ բերած է, որովհետեւ «Օբերա»-ի նո-
րակազմ խումբը այդ իրիկուն իր առաջին
ներկայացումը պիտի տար: Նիւ Եօքի ամէ-
նէն հարուստ խափօքի դասակարգը հոն էր.
բոլոր խափօքի Տիկիները կիսամեկ էին,
շատ ծանրագին շքանշաններով ու ծաղիկ-
ներով զարդարուած: Ներկայացումն էր

Պիզէի Գարմէնը: Նիւ Եօրֆի բասոնին այդ ամէն հանդիսութեանց մէջ միայն սեւ կէս մը, ո՛չ, հերմակ կէս մը կար: Տեւէ՛ Ի՛նչպէս: Գարմէնի դերը կատարող երգչուհին, որ նոյնպէս խափեիկ մըն էր, անակնկալ կերպով կը հիւանդանայ, ներկայացումէն մէկ ժամ առաջ, անանկ որ զուր տեղը կը փնտռեն միեւնոյ՛ն զոյնով երգչուհի մը. հետեւաբար հերմակ երգչուհիի մը դիմելու պէտքին տակ կը զսնուին. կը զսնեն մէկը որ կ'ընդունի ատոնց հրաւերը, բայց բացարձակապէս կը մերժէ, հակառակ խոստացուած անագին վարձատրութեան, դէմը եւ թեւերը ներկելու պայմանը, որպէս զի ատով խումբին ներդաշնակութիւնը պահպանէ: Թերեւս Եւրոպայի մէջ որ եւ է երգչուհի ընդունը զուսուորուելու պայմանը, բայց Ամերիկայի մէջ ցեղային նկարագիրը այնքան զօրաւոր է որ՝ ասանկ պայմանի մը հաւանութիւնը պարզապէս անուանարկում մը պիտի սեպուէր որ եւ է Ամերիկացիի համար: Այդ իրիկուն Գարմէն միակ հերմակ կէսը կ'ըլլայ այդ անագին սեւ բազմութեան մէջ: — ԹԹ

ԴԵՐԱՍԱՆ ՀՕԼԱՍԻ ՄԱՀԸ

Չափրասէն Եսքը, Օսմ. Ռեմը կարեւոր կորուստ մը կ'ունենայ նորէն, մահովը Գէորգ Հօլասի, որ առեկէ մը ի վեր կը տառապէր կարուածէ: Հօլաս կարողացոյց անդամներէն մէկն էր Օսմ. Թասերախումբին, ուր իր ներկայութիւնը եւ դերը միշտ ծափահարուած են արժանի գնահատութիւնով իր կարողութեան: Իր մարմնացուցած դերերուն մէջ դրած տաղանդին ու յաջողութեան համար՝ սիրելի եւ ժողովրդական դէմք մը. դարձած էր Հօլաս, որուն կորուստը զգալի պակաս մը կը բաղուէր մեծ վիճակը պատահաւ: արուեստատէրներու: Մնակեան եւ Ալիքանեան բասերախումբերուն, ինչպէս հանրութեան կողմէ՝ մեծարանքի արժանի ցայցերով՝ կատարուեցաւ յուրաքանչեւ որութիւնը Հինգէ. օրը, Գասքը. Կէօյի Հայ. Հռոմէականներու եկեղեցիին մէջ:

ՏԻԿԻՆ ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ

Նախորդ շաբթու վերջին պահուն արձանագրած էինք այն դառն կորուստը՝ զոր ունեցան Վարդագարեան եւ Թօֆաթեան ընտանիքները, մահովը Տիկին Թագուհի Վարդագարեանի: Ուրբաթ օր, Բերաի Ս. Երոռ. դուրսին եկեղեցիին մէջ հանդիսաւոր շնորհ կատարուեցաւ հանգուցեալ Տիկնոջ յուրաքանչեւ որութիւնը: Կը նախագահէր Տ. Հմայեան Սրբազան, իր շուրջը ունենալով Տ. Գաբրիէլ եւ Մովսէս Եպիսկոպոսները. Տ. Վահան Տէր-Մինասեան, Բաբգէն, Գրիգորիա Աբարդեան, Տիգրայր Մ. Վրդները, Մարկոս Վրդ. եւ բազմաթիւ բաժանաւոր: Քառասունի չափ դպիրներ երգեցին մեռելական շարականները: Կատեան վարձարանի աւակներէն, առաջնորդութեամբ իրենց Տնօրէնին՝ Գրիգոր Էմ. Մարգարեանի, Բերաի Աղիասպիւնամին հիւանդապահութեան դասընթացէն շրջանաւարտ օրիորդներ, շրջապատած էին ընկուզենիէ դազաղը՝ որ կը հանգչէր տանարին մէջտեղը մանաքեմի մը վրայ, շրջապատուած կերոններէ եւ ծածկուած ծաղկեպսակներով: Հայ եւ օտարազգի հոծ բազմութիւն մը լեցուցած էր տաճարը: Դեղեցիկ դաբաճակեալ մը խօսեցաւ Տ. Հմայեան Սրբազան, դուրսեցելով հանգուցեալ Տիկնոջ բարեմասնութիւնները եւ ներկայացուց զայն իբր Հայ օրինակելի կին մը: Յետոյ քափօր կազմուելով դազաղը եկեղեցիին բակը հանուեցաւ եւ անկէ փառածի շէնք մեռելական մը դրուելով առաջնորդուեցաւ նախ Ս. Յարութիւն եկեղեցին եւ յետոյ Շիօլիի Ազգ. գերեզմանատունը: Թափօրը էր հասաւ Ս. Յարութիւն եկեղեցին, ներկաներուն ցուակցութիւններ ընդունեցին հանգուցեալ Տիկնոջ ընտանեկան պարագաները: Յետոյ դազաղը մեռելականութիւն մէջ դրուելով փոխադրուեցաւ գերեզմանատուն, ուր ընտանեկան դամբարանին մէջ ամփոփուեցաւ մարմինը:

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԵՂԻՇԷ ԵՊԻՍԿ. ԳՈՐԵՍԵԱՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՍ
ՀՐԱՆՏ ՍԱՍՏՈՒՐ

Հիմնադիր. Կ. Ս. Իկթիսէն: Արտատպ. ՅԹԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆՆ

մասին, ուր ճշդուած են Գահիրէի և Աղեքսանդրիաի եկեղեցիներուն մատակարարութեան վերաբերեալ դործառնութեանց սահմանը ևն. : Այս կանոնադիրը, որուն հիմը կը կազմէ Վսեմ. Պօղոս փառայի կողմէ նախապէս Ս. Պատրիարքին ուղղուած ծրագիրը, կեդր. վարչութեան իսան ժողովին կողմէ քննուած և ընդունուած ըլլալով, Պատրիարքարանէն զրկուած է եզրկատօսի Առաջնորդարանին :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ Ա.ԶԳ. ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴԻ. — Աւարտական Գննութեանց Հրահանգին Յ, Կրդ յօդուածներուն տրամադրութեան համաձայն, որոշուած է որ քննութիւններու հարցարանները՝ ուսողութեան խնդիրներէ զատ, ուսուցիչներու և աշակերտներու հաղորդութիւն Մայիս 15ին, քննութիւնները կատարելու պայմանով Յունիսի վերջերը կամ յուլիսի սկիզբները : Որովհետեւ քննութիւններու համար որոշուած ժամանակը կը մօտենայ և վարժարաններու կրթական ծրագիրն ալ վերաքննութեան ենթարկուած է, Աղգ. Ուսումն. Խորհուրդի որոշումով, յարմար դատուած է որ՝ այս տարի ալ քննութիւնները կատարուին նախորդ հարցարաններուն վրայ : Հետեւաբար այն տնօրինութիւնը ծանուցանելով մայրաքաղաքիս աղգային վարժարաններու Պատ. Տեսուչներուն և աւագ-ուսուցիչներուն, կը հրաւիրուին որոշուած ժամանակին շրջանաւարտ աշակերտներուն հաղորդել նոյն հարցարանները՝ զորս ունին արդէն. իսկ քննութիւններու օրերը և յարակից կարգադրութիւնները պիտի որոշուին ու ծանուցուին յառաջիկային :

«ՄԱՍԻՍ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ. — Տիար Տիգրան Անդրէասեան (Մարդուան). — Հաճեցէք զրկել :

Տիար Մ. Զ. (Կիւրին). — Մասիսի Ալպօմը որոյ պայմանաժամի մը մէջ բաժանորդագրուողներու սահմանուած ըլլալով՝ կը ցաւինք որ չենք կրնար զրկել Զեղ, քանի որ անոր հաստատումէն առաջ բաժանորդագրուած և վճարած էք : Կրնայիք ստանալ դիրքերու պարգեւը, եթէ հաղորդած ըլլայիք՝ ժամանակի՛ն՝ ձեր ընտրանքը :

Մամուրէթ-Իւլ-Ազիզի մէջ Մասիսի բաժանորդագրուել փափաքողներ կրնան դիմել Կեդր. վարժարանի ուսուցիչներէն Տիար Մկրտիչ Պարսամեանի, որուն կրնան յանձնել իրենց բաժանորդագիրը, Տիար Պարսամեանի յանձնուած ըլլալով տեղին գործակալական պատուակալներ կայացուցութիւնը :

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԻ կը դարմանէ ամէն տեսակ ախտայի և լինտի հիւանդութիւնները, փորած ախտանքը կը լեցնէ՝ առողջ ախտանքու պէս երկար ասին գործածուելու պայմանով :

ԲՈՒՂՐՈՒՎԻՆ ԴՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ախտանք կը պատրաստէ, ընթականին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարմաք-Փարու, Թիւ 8, Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգ-չարթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ :

Կիւսկի օրերը ժամայրութեամբ կ'ընդունի :

ՊԱՆՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱՒ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՆԿ
Դրամագլուխ և պահեստ ժրանք 9,500,000
Վերապահովագրական
Դրամագլուխ և պահեստ » 142,740,00


ՊԱՆՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. , Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զւարմատեղի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն. :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ
ալաբիա՝ Տեօյլէ Օրիէնդ Պանքի կից, Սինասոն Խան. (2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իսթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով. Կեդրոնատեղի Աշտեան գրատուն:

- Ընտանեկան Գողտնիքներ Յ հատոր 15 զրշ.
- Արուարձանին Տղան Յ հատոր 15 զրշ.
- Հանրակառքին Ոճիրը 5 զրշ.
- Ամուսնութիւնք Բարիշու 5 զրշ.
- Քաղաքական Տնտեսութիւն. Ժօղէֆ Կառնիէ 5 զրշ.

Եղիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ դեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառագիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Զարեհ էֆ. Թորոսեանի քով, (Պոլիս, Պահլէ Գարու, Բաղրամ Բաշա Խան) որուն կրնան դիմել Բառարանին՝ (գինը 15 զրշ. փօսթի ծախքով 16 1/2) ինչպէս գրեհական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամբա գրավաճառի մը հետ գործ ունենալու վտանգութեամբ. — Իր հրատարակութիւնն է նաև Դպրոցի Գիրքը դասագիրքերու շարքը, որ միակն է կանոնաւոր մէթոտով մը ընթացող՝ նախակրթական դասընթացքի չըջանլն համաձայն:




Կը գտնուի բոլոր
դեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՅ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զոտ, մասնագիտաբար և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, ազիք-ներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր զաղխական ակտերը: Այս վերջին ակտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զարեքաբով օրերը միայն ձրի:

(8—10)



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ, ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Զեռի, Դոսի ու ոսփի եւ ձեռի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ րովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱՐԹԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԿԱՆԱԾԱՆ

ԲԵՐԱ

ՊԱՆԱՏ

ՄԱՐԻՏԱՐ

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, 343 և 343.

2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ,

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.

2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

1. Սուլթան Համամ.

2. Սուլթան Պէյադիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13.

Զարչը Պօյու, Թ. 120.

Գասերը եւ նորոգութիւնները ձրի.

կատարելալ երաշխաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:

(9—10)

ՄԱՍՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւառներու համար տարեկան

60 դր.

Արտատպմանի

» »

14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները, միշտ ձրիաբար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զնորտարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

«ՄԱՍՍԻՍ»Ի Հասցէին

Գուրեմնլու խան, քիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼԻՍ

درعالم غلطه قورسئونى خاندە نومرو ۷ «ماسيسى» غزتىسى اداره قاتمىسى

Rédaction de la Revue «MASSIS»

Nº. 7, Courchounlou Han, Galata.

CONSTANTINOPLE

ԼՈՅՍ ՏԵՍԱՍԻ Է ԿԻՆԸ ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆ

ՄԱՍՍԻՍԻՆ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմութեան անիտիոնով մը կը երեկայանայ Ենովք Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հասնաւէր զոսմանստեղծութիւնը քէ իր գրագրի, ճշմարտագրի կարողութիւններուն կը միացնէ վայրոյի տաղանդը:

Կինը բացի իր գրական արժէքէն, այսպէսով տեսակէտով ալ ուսուցիչ նորութիւններ կը պարունակէ: Ճաշակաւոր ու սիրուն հասարակ մըն է, որ փափաք կը երեւցնէ մէկ ծայրէն միւսը՝ կարգալու:

Ենովք Արմէն (Կինը) մէջ) կ'զգուսանայ այն միտ գրականութեան, կ'զգուսանայ տեսնելու մեծ տեսնակներու վարդապետներուն ետին դալկացող կեանքէն. իր ուզածը դուրսի կեանքէն է, կեանքի, գիտագրով, արեւին տակին, իր յորդ աշխատանքէն մէջ: Եւ նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ մտեղիային սկզբնական վաղեմական բնացողներուն, զոր երկինք կը հանէ, գլխաւորով մը: Ենովք Արմէն յստիօրէն sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ է անպարկեշտութեան:

Անուշտ ամէն գրաւոր պիտի փափաքի ունենայ Ենովք Արմէնի այս հրահրակութիւնը, Կինը, գրական գեղեցիկ վայելք մը քննադատելու համար:

Կինը, հեղինակին գրչի այդ առաջնէկ զուակը, նորութիւն մըն է իբր լոյսով:

Կինը իր գրական արժանիքին կը միացնէ այսպիսի մը հիմնապէս արքիսիփի ու բոլորովին նոր ճաշակով, որ կը յաւանգէ Կինըին համարելի հեղինակը:

Երեսասարդ հեղինակը, որուն գրութեանը հանդէսներու մէջ, այս անգամ իր մտածումները խաղաղօրէն է սիրուն ու կակիկ հասարակ մը մէջ, որուն այսպիսիները, բոլորին ազնուութիւնը եւ գեղեցիկ ճաշակը հանդիս կը պարգեւէ յերեւոյթին ունենալու անկէ հաս մը: Ձեռնապէս յանձնարարելի է այս լոյսովի հասարակ:

Իր քննադատող հանգամանակով Կինը կարգաւորելու արժանի գիրք մըն է լուսագրող աշխատութիւններէն հեղինակին:

Գին 5 դրուշ, Կը զանուի ամէն գրականութի լոյս:

Պատմութեան